

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է ներքին մրցույթ՝ Նախարարության Էներգետիկայի վարչության Էներգետիկ տարածաշրջանային շուկաների զարգացման բաժնի պետի (ծածկագիր՝ 22-33.5-Ղ4-4) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Ներքին մրցույթին կարող են մասնակցել տվյալ համապատասխան մարմնի հանրային ծառայողները և քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված քաղաքացիական ծառայողները, որոնք բավարարում են հայտարարված թափուր պաշտոնի անձնագրի պահանջներին:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Էներգետիկայի վարչության Էներգետիկ տարածաշրջանային շուկաների զարգացման բաժնի պետի (ծածկագիր՝ 22-33.5-Ղ4-4) պաշտոնի բնութագրի, պաշտոնն զբաղեցնող քաղաքացիական ծառայողի համար սահմանված իրավունքների, պարտականությունների, պաշտոնին ներկայացվող պահանջների՝ պաշտոնի համար պահանջվող կրթության, աշխատանքային ստաժի, մասնագիտական գիտելիքների, կոմպետենցիաների, ինչպես նաև աշխատանքի կազմակերպական լիազորությունների և ղեկավարման շրջանակների մասին տեղեկատվությունը ներառված է պաշտոնի անձնագրում, որի էլեկտրոնային օրինակին կարող եք **ծանոթանալ կից**:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Էներգետիկայի վարչության Էներգետիկ տարածաշրջանային շուկաների զարգացման բաժնի պետի (ծածկագիր՝ 22-33.5-Ղ4-4) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները պետք է անձամբ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն N 3) ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1. դիմում (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
2. անձնագիր և/ կամ նույնականացման քարտ՝ պատճեններով (եթե անձը նույնականացման կամ սոցիալական քարտ չի ներկայացնում, ապա անհրաժեշտ է ներկայացնել անձին հանրային ծառայության համարանիշ տրամադրելու մասին տեղեկանք կամ հանրային ծառայության համարանիշի տրամադրումից հրաժարվելու մասին տեղեկանք՝ պատճեններով),
3. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ՝ պատճենով,
4. աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթուղթ՝ պատճենով,
5. արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկ՝ պատճենով կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայական՝ պատճենով,
6. մեկ լուսանկար 3+4 սմ չափսի:

Մրցույթին մասնակցելու համար դիմումներն ընդունվում են 2020 թվականի ապրիլի 7-ից մինչև 2020 թվականի ապրիլի 16-ը ներառյալ՝ աշխատանքային օրերին: Դիմումները յուրաքանչյուր աշխատանքային օր ընդունվում են ժամը 9.30-ից 12.30-ը և 14:00-ից 17:00-ը:

Մրցույթի թեստավորման փուլը կանցկացվի 2020 թվականի մայիսի 13-ին՝ ժամը 11:00-ին, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն N 3):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի 2020 թվականի մայիսի 15-ին՝ ժամը 11:00-ին, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն N 3):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի <<Հարցարան>> և <<Աշխատանքային իրավիճակներ>> ձևաչափերով:

Հիմնական աշխատավարձը 256623 (երկու հարյուր հիսունվեց հազար վեց հարյուր քսաներեք) ՀՀ դրամ է:

Նշված պաշտոնին հավակնող անձը պետք է լինի բարեկիրթ, պարտաճանաչ, հավասարակշռված, գործնական, ունենա նախաձեռնողականություն և պատասխանատվության զգացում:

Թեստում ընդգրկվող մասնագիտական գիտելիքների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են հետևյալ բնագավառներից՝

- <<Էներգետիկայի մասին>> ՀՀ օրենք հոդվածներ՝ 1,2,3,4,5,6,17,,21,22,23,24,28,39,39.1,39.2,39.5,39.6,40,56,59
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=123080>
- <<Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին>> ՀՀ օրենք հոդվածներ՝ 2,3,5,6,8,9,13,19
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=118584>
- <<Ստանդարտացման մասին>> ՀՀ օրենք հոդվածներ՝ 3,10
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=112574>
- <<Օտարերկրյա ներդրումների մասին>> ՀՀ օրենք հոդվածներ՝ 1,8,18,22,23
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=34872>
- «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենք հոդվածներ՝ 2,3,4,5,6,8,10,13,16,24
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120816>
- «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենք հոդվածներ՝ 3,6,11,16,18,22,24,28,30,3150
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121802>
- «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք. հոդվածներ՝ 2 - 7, 9, 10, 14, 34, 35
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=131562>
- «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք հոդվածներ՝ 2, 3, 4, 5, 6, 15, 20, 30, 35, 50, 52
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=132720>
- «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք հոդվածներ՝ 4, 10, 12, 17, 21, 23, 24, 37
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120807>
- ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի օգոստոսի 8-ի <<Բնական զագի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին>> N 95-Ն որոշում
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=132835>
- ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 17-ի <<ՀՀ էներգետիկական համակարգի ցանցային կանոնները, ՀՀ էներգետիկական համակարգի հուսալիության և անվտանգության ժամանակավոր ցուցանիշները հաստատելու, ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մի շարք

որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու և մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին»> N 161-Ն որոշում.

հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=132045>

- ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի <<Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին>> N 358-Ն որոշում.

հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=133628>

- Ինֆորմատիկա 7-րդ դասարան: Դասագիրք հանրակրթական դպրոցի համար: Ս.Ս.Ավետիսյան, Ա. Վ. Դանիելյան: Մասնագիտական խմբագիր՝ Ռ.Վ. Աղաշյան: Երևան 2012, էջեր՝ 5, 38, 40, 54, 98-99

հղումը՝ <http://fliphtml5.com/fumf/egdx>

- <<Փրավոր խոսք>>, Վազգեն Գաբրիելյան, երրորդ լրամշակված հրատարակություն, Լիմուշ հրատարակչություն, Երևան 2012, էջեր՝ 70, 71, 73, 94-97, 104, 106-110, 114

հղումը՝ <http://www.parliament.am/library/books/gravor-khosq.pdf>

Թեստում ընդգրկվող կոմպետենցիաների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են տվյալ պաշտոնի համար սահմանված և ՀՀ կառավարության պաշտոնական ինտերնետային կայքէջում՝

հրապարակված ընդհանրական կոմպետենցիաներից մասնավորապես՝

- «Աշխատակազմի կառավարում» կոմպետենցիա,

հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/1.pdf

- «Որոշումների կայացում» կոմպետենցիա,

հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/7.pdf

- «Խնդրի լուծումը» կոմպետենցիա,

հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/4.pdf

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները մրցույթի վերաբերյալ հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն N 3, հեռախոսահամար՝ 010-511-355, էլեկտրոնային փոստի հասցե՝ n.kirakosyan@mta.gov.am):

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Էներգետիկայի
վարչության Էներգետիկ տարածաշրջանային շուկաների զարգացման բաժնի պետ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝
Նախարարություն) Էներգետիկայի վարչության (այսուհետ՝ Վարչություն) Էներգետիկ
տարածաշրջանային շուկաների զարգացման բաժնի (այսուհետ՝ Բաժին) պետ (ծածկագիրը՝ 22-
33.5-Ղ4-4)

1.2 Ենթակա և հաշվետու է

Բաժնի պետը անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին

1.3 Ենթակա և հաշվետու պաշտոնները

Բաժնի պետին անմիջական ենթակա և հաշվետու են Բաժնի աշխատողները

1.4 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության գլխավոր
մասնագետներից մեկը:

1.5 Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան-10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. Ապահովում է Էներգետիկ տարածաշրջանային շուկաների զարգացման և դրանց գործունեության հետ կապված աշխատանքները.
2. Ապահովում է Էներգետիկ տարածաշրջանային շուկաների զարգացման ռազմավարությունների, հայեցակարգերի, ծրագրերի մշակումը.
3. Ապահովում է ջերմային, գազի և Էլեկտրական Էներգիայի ռեսուրսների առաջնահերթ ու արդյունավետ օգտագործման խթանման տնտեսական ու իրավական մեխանիզմների մշակումը.
4. Ապահովում է բնագավառի կայուն զարգացման, անվտանգության ապահովման ռազմավարական ծրագրերի և դրանցից բխող միջոցառումների մշակումը.
5. Կազմակերպում է Էներգետիկայի բնագավառի շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված միջոցառումների իրականացումը.
6. Ապահովում է Էներգետիկայի բնագավառի իրավական նորմատիվ ակտերի նախագծերի մշակումը.
7. Ներկայացնում է իրավական ակտերի նախագծերի քննարկում և դրանց վերաբերյալ կարծիքներ ու առաջարկություններ.
8. Ապահովում է Միջազգային պարտավորություններից բխող ընդհանուր Էլեկտրաէներգետիկական շուկաների զարգացման և այդ շուկաների բնականոն գործունեության ապահովմանն ուղղված աշխատանքների իրականացումը.
9. Աջակցում է Էլեկտրաէներգետիկական շուկաներում տնտեսավարող սուբյեկտների գործունեության ընդհանուր կանոնների մշակման աշխատանքներին.
10. Ապահովում է միջազգային պարտավորություններից բխող բնական գազի ընդհանուր շուկաների զարգացման և այդ շուկաների բնականոն գործունեության ապահովմանն ուղղված աշխատանքների իրականացումը.
11. Ապահովում է տարածաշրջանային Էներգետիկ շուկաների զարգացմանն ուղղված աշխատանքային խմբերի և դրանց առնչվող նիստերին, խորհրդակցություններին, քննարկումներին մասնակցությունը.
12. Ներկայացնում է տարածաշրջանային Էներգետիկ շուկաների զարգացմանն ուղղված նորմատիվային դաշտի կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ.
13. Կազմակերպում է Հայաստանի Հանրապետության Էներգետիկայի բնագավառի կայուն

զարգացման, անվտանգության ապահովման և էներգամատակարարման հուսալիության ռազմավարության ծրագրերի ու միջոցառումների մշակման աշխատանքների իրականացումը.

14. Կազմակերպում է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի երկարաժամկետ զարգացման ծրագրերի մշակումը.
15. Կազմակերպում է նախարարության գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների նախագծերի մշակման և հաստատված միջոցառումների իրականացման և գերակա խնդիրների լուծման արդյունքների ամփոփման աշխատանքները.
16. Մշակում է Հայաստանի Հանրապետության տարեկան պետական բյուջեի նախագծի վերաբերյալ առաջարկություններ.
17. Աջակցում է Եներգոլուսների ներգրավման նպատակով միջազգային դոնոր կազմակերպությունների հետ բանակցությունների վարման, կնքվող պայմանագրերի (համաձայնագրերի) նախագծերի քննարկման և կնքման նախապատրաստման աշխատանքներին.
18. Համակարգում է ծրագրերի իրականացման միջնախագծային փաստաթղթերի (տեխնիկատնտեսական զեկույցներ, տեխնիկատնտեսական հիմնավորումներ և այլն) մշակման աշխատանքները.

Իրավունքները

- Այլմարմիններից, պաշտոնատարանձանցից պահանջել ներկայացնելու էներգետիկ տարածաշրջանային շուկաների զարգացման հետևապլանի հրաժեշտ տեղեկատվություն և կյուբեր.
- էներգետիկ տարածաշրջանային շուկաների զարգացման ռազմավարությունների, հայեցակարգերի, ծրագրերի մշակման ապահովման համար պահանջելու ներկայացնել համապատասխան փաստաթղթեր, հիմնավորումներ.
- Բնագավառի կայուն զարգացման, անվտանգության ապահովման ռազմավարական ծրագրերի և դրանցից բխող միջոցառումների մշակման համար նախապատրաստել առաջարկություններ, տեղեկանքներ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.
- էներգետիկայի բնագավառի ընկերություններից ստանալ տեղեկատվություն՝ շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ.
- Իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրություն, քննարկումների կազմակերպում.
- Միջազգային պարտավորություններից բխող ընդհանուր էլեկտրաէներգետիկական շուկաների զարգացման և այդ շուկաների բնականոն գործունեության աշխատանքների իրականացման ապահովման նպատակով մասնակցել ընդհանուր էլեկտրաէներգետիկական շուկաների զարգացմանն ուղղված իրավական ակտերի մշակմանը, հանդես գալ առաջարկություններով, մասնակցել էլեկտրաէներգետիկական շուկաների զարգացմանն ուղղված իրավական ակտերի մշակման աշխատանքներին, Միջազգային պարտավորություններից բխող բնական գազի ընդհանուր շուկաների զարգացման և այդ շուկաների բնականոն գործունեության ապահովմանն ուղղված աշխատանքների իրականացման նպատակով մասնակցել բնական գազի ընդհանուր շուկաների զարգացմանն ուղղված իրավական ակտերի մշակմանը, հանդես գալիս առաջարկություններով.
- Ներկայացնել էներգետիկ շուկաների զարգացմանն ուղղված աշխատանքային խմբերին և դրանց առնչվող նիստերին, խորհրդակցություններին, քննարկումներին մասնակցողների թեկնածություններ.
- Ուսումնասիրել տարածաշրջանային էներգետիկ շուկաները կանոնակարգող իրավական դաշտը, էներգետիկ համակարգի ընկերություններից ստանալ առաջարկություններ.
- Համապատասխան մարմիններից պահանջելու ներկայացնել անհրաժեշտ տեղեկատվություն.
- Համապատասխան մարմնի տարբեր ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ կազմակերպել աշխատանքային քննարկումներ.
- Էլեկտրաէներգետիկական շուկաներում տնտեսավարող սուբյեկտների գործունեության ընդհանուր կանոնների մշակման աշխատանքների աջակցություն.
- Տարածաշրջանային էներգետիկ շուկաների զարգացմանն ուղղված աշխատանքային

խմբերին և դրանց առնչվող նիստերին, խորհրդակցություններին, քննարկումներին մասնակցությունը:

- Տարածաշրջանային էներգետիկ շուկաների զարգացմանն ուղղված նորմատիվային դաշտի կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների մշակում և ներկայացում:

Պարտականությունները

- Ապահովում է ներկայացված փաստաթղթերի քննարկումը, ամփոփումը և արդյունքների հիման վրա առաջարկությունների ներկայացումը:
- Կազմակերպում է էներգետիկ տարածաշրջանային շուկաների զարգացման և դրանց գործունեության հետ կապված ուսումնասիրությունները և արդյունքների մասին նախապատրաստում տեղեկատվություն:
- Ուսումնասիրում է ոլորտը կարգավորող իրավական ակտերը, ապահովում է էներգետիկ տարածաշրջանային շուկաների զարգացման ռազմավարությունների, հայեցակարգերի, ծրագրերի մշակման աշխատանքները, կազմակերպում մասնագիտական առաջարկությունների ներկայացումը:
- Ապահովել ջերմային, գազի և էլեկտրական էներգիայի ռեսուրսների առաջնահերթ ու արդյունավետ օգտագործման խթանման տնտեսական ու իրավական մեխանիզմների մշակումը:
- Ներկայացված տեղեկատվության մշակման հետ կապված աշխատանքների արդյունքում կազմված տեղեկանքների, առաջարկությունների և եզրակացությունների ներկայացում:
- Ստացված տեղեկատվության ամփոփում և համապատասխան տեղեկանքի նախապատրաստում:
- Ապահովել միջազգային պարտավորություններից բխող ընդհանուր էլեկտրաէներգետիկական շուկաների զարգացման և այդ շուկաների բնականոն գործունեության ապահովմանն ուղղված աշխատանքների իրականացումը:
- Աջակցել էլեկտրաէներգետիկական շուկաներում տնտեսավարող սուբյեկտների գործունեության ընդհանուր կանոնների մշակման աշխատանքներին:
- Ապահովել տարածաշրջանային էներգետիկ շուկաների զարգացմանն ուղղված աշխատանքային խմբերին և դրանց առնչվող նիստերին, խորհրդակցություններին, քննարկումներին մասնակցությունը:
- Տարածաշրջանային էներգետիկ շուկաների զարգացմանն ուղղված նորմատիվային դաշտի կատարելագործման վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ:
- Իրականացնել ներկայացված փաստաթղթերի՝ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանության ստուգում:
- Ուսումնասիրել ոլորտը կարգավորող իրավական ակտերը և ներկայացնել համապատասխան մասնագիտական առաջարկություններ:
- Իրականացնել էլեկտրաէներգետիկական շուկաներում տնտեսավարող սուբյեկտների գործունեության ընդհանուր կանոնների մշակման աշխատանքները:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

Ունի բարձրագույն կրթություն

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառնությունների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3 Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Չանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ էներգետիկայի բնագավառում կամ ենթակառուցվածքների զարգացման բնագավառում կամ սոցիալական և (կամ) տնտեսական բնագավառում ուսումնասիրությունների, հետազոտությունների, մշտադիտարկումների և վերլուծությունների իրականացման կամ տնտեսագիտության բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Զաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ

3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարելավություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Կոնֆլիկտների կառավարում
4. Բողոքների բավարարում
5. Ժամանակի կառավարում
6. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
7. Փաստաթղթերի նախապատրաստում

4. Կազմակերպական շրջանակը

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և քաղաքականության իրականացման ապահովման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի, այլ պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ իր իրավասությունների շրջանակներում:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային միավորի գործառնություններից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ կամ մասնակցում է այդ խնդիրների լուծմանը: